

ՀԱՐԱՆԵՐ

891.995

Է-83



Ա. ԶորՅԱՆ



ԿԱՆՈՒՇԸ

891.995
2-83

ՍՏ. ՀՈՐՅԱՆ

2011-05

891.995

2-83

ur

Վ Ա Ն Ո Ւ Շ Ը

ՊԵՏՏՐԱՏ

ՀԱՅԹԵՄ ԿԳ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՏԵՐԵՎԱՆ

1988



Դուք Վանուշին, իհարկե, չեք ճանաչում. նա
դեռ հայտնի մարդ չի, իրենց գյուղից ել բոլորովին
զուրս չի յեկել ու, զբանից բացի, այնքան փոքր է,
վոր այս տարի նոր միայն փոխադրվել է յերրորդ
դասարան:

Բայց իրենց Թաղի յերեխաները նրան լավ են
ճանաչում. գիտեն, վոր Վանուշը լավ քար է գցում
ընկույզի ծառերին, այսինքն՝ նրա քարը զուր չի
անցնում ու միշտ ընկույզ է գցում ցած. ամենից
արագավազը նա յե խաղերի ժամանակ, իսկ յերբ
մայրը գնում է բամբակ հավաքելու, նա հաճախ
գնում է դաշտը՝ մորը ոգնելու, հետո, յերբ հոգնում,
վերադառնում է և նորից խաղում յերեխաների
հետ:

Ու այնքան է խաղում, վոր իրիկունները յեր-
բեմն քնում է Զառանց հացի կամ հացը բերանին:
Իսկ յերբ ցանկանում է դասը լավ սովորել — նստում
է մինչեւ կես գիշեր:

Տարորինակ տղա յե Վանուշը:

Բայց մի անգամ նա հայտնի դարձավ իրենց
գյուղում, և կոլտնտեսականները մի քանի որ շա-
րունակ նրա մասին եյին խոսում:

— Այ քեզ Վանուշ, հա՛...

— Այ դու Վանուշ...



1588

38

Ի՞նչ եր պատահել:

Մի յերեկո, յերբ դուրսը մութն եր ու անձրեւի, յերբ Վանուշը նստած դաս եր պատրաստում, թրջված հագուստներով ներս մտավ նրա հայրը. հրացանը դրեց սենյակի անկյունում և հոգնած ու տխուր ձայնով ասավ մայրիկին.

— Դուդս բռնել ա, այ կնիկ: Տեղ գցի...

Նրա ատամները գրեթե զարկվում եյին իրար: Վանուշի հայրիկը վաղուց դողերոցք ունեւր. յերբ հիվանդանում եր՝ մայրիկը մոռով թեյ եր պատրաստում, խմեցնում, անկողին եր գցում ու խնամքով ծածկում, և հայրիկը լավանում եր մի կամ յերկու որից: Այս անգամ եւ, յերբ մայրիկը տեղը պատրաստեց ու թեյ, հայրը կարգադրեց Վանուշին.

— Վազի, Վանուշ ջան, գրասենյակ, նախագահին ասա՝ «հայրիկս հիվանդացել ա», թող մեկին պահակ նշանակի պահեստի վրա:


Վանուշն անմիջապէս մի ձեռնափայտ վերցրեց՝ շներէ համար, տոպրակի ծայրը, ինչպէս ինքն եր ասում. «պոպոզ» արամ՝ գլուխն անցրեց ու դուրս յեկավ:

Դուրսը մութն եր ու բարակ անձրեւի եր մազում, և անձրեւի պատճառով տների ճրագներն ավելի աղոտ եյին յերեւում. փողոցներում անցորդներ չկային, շներն եւ չեյին հաշում, գուցե դարձյալ անձրեւի պատճառով:

Կոլտնտեսութեան գրասենյակը շատ եւ հեռու չեր: Իրենց փողոցի կեսից թեքվելով՝ Վանուշը մտավ մի ուրիշ փողոց և շուտով հասավ գրասենյակ:

Բայց, զարմանալի բան, գրասենյակում լույս չկար: Ինչպէս յերեւում ե, փակ եր, և նախագահը, յերեւի, տուն եր գնացել:

Այ բեզ բան:



ՄԲԱՆԱՍ-37

Վանուշը մեկ մտածեց.— վերադառնալ՝ հորը հայտնել, վոր գրասենյակը փակ է, նախագահը չկա, բայց իսկույն ել յենթադրեց, վոր նախագահը կարող ե իր տանը լինել, ավելի լավ է գնա տանը հայտնի. միևնույն է, յեթե վերադառնա իրենց տուն ել, հայրիկը զարձյալ կուզարկի նախագահի տունը:

Ու Վանուշը ձեռնափայտը ձեռին, տոպրակի «պոպոդը» գլուխն անցրած, գնաց զեպի նախագահի տունը:

Անձրեվը շարունակում եր մաղել:

Ճանապարհին մի յերկու տեղ շները բակերից հաջեցին նրա վրա, բայց առաջ չեկան, մի ուրիշ տեղ մի գամփու հաջելով դուրս յեկավ փողոց, բայց տեսնելով յերեվի անցնողը փոքր սղա յե, բանի տեղ չդրեց և չհարձակվեց, իսկ Վանուշն այնպես կարծեց, թե նա իր փայտից ու «պոպոդից» վախեցավ:

Յերը նա հասավ, վերջապես, նախագահի տունը, փողոցից ձայն տվեց հեմարով.

—Ընկեր Նիկոլ, ընկեր Նիկոլ,— կրկնեց նա՝ մի քանի անգամ:

Նախ մի փոքրիկ շան հաջոց լավեց, ապա՝ մի կանացի ձայն.


—Եղ ռվ ա:

—Ընկեր Նիկոլը տանն ե:

—Չե, տանը չի... Դեռ չի յեկել...

Վանուշն ել վռչինչ չասավ: Քանի վոր նախագահը տանը չեր, ել ինչ ասեր—միայն նա կարող եր նոր պահակ նշանակել հոր փոխարեն: Ուրեմն պետք եր վերադառնալ տուն:

Յեվ Վանուշը վերադարձավ հորը հայտնելու, վոր նախագահը մինչ գրասենյակումն եր, մինչ տանը:



Բայց յերբ վերադարձաւ հայրն արդեն քնած էր վերմակներով փաթաթված: Նրաներս մտնելուն պես՝ մայրը ձեռն իր բերանին դրեց, վոր Վանուշը կամաց խոսի՝ քնած հորը չարթնացնելու:

Ու Վանուշը, մի աչքը հոր կողմը, կիսածայն հայտնեց, վոր նախագահը վոչ գրասենյակումն էր, վոչ տանը:

— Վայ, եղ լավ չեղավ,—ասալ մայրը,—պահեստին մի բան կարող ե պատահել, հետո...

— Ի՞նչ կպատահի վոր,— շուկով հարցրեց Վանուշը:

— Կարող են գողեր մտնել, ցորենը գողանալ և հետո հորդ կմեղադրեն, վոր մարդու բան չի ասել և, պահեստն անտեր թողած, յեկել ե տուն:

Մոր խոսքերը մտահոգության մեջ զցեցին Վանուշին:

— Կուզե՞ս յես գնամ, մայրիկ: Հրացանը վերցնեմ ու գնամ,—ասավ նա մի փոքր լռելուց հետո:

— Չէ, չէ, դու քնի: Հիմի ո՞վ ե իմանում պահակ կա, չկա: Բոլորն ել գիտեն, վոր պահեստի վրա միշտ պահակ ե լինում: Բան չեն անի, չե... Բնի...

Յեւ մայրը, Վանուշին հանգստացնելով, պառկեցրեց, քիչ հետո յեր, լամպը հանգցնելով, պառկեց ինքը: Նա այնքան հոգնած էր չանաքի աշխատանքից, վոր խկուշն քնեց:

Բայց Վանուշի քուռը չտարավ, պառկած մտածում էր, թե ի՞նչ կլինի, յեթե հանկարծ թշնամիներն խսկապես մտնեն պահեստի ցորենը գողանան: Այն ժամանակ, ինչպես մայրիկն ասավ, հայրիկին կմեղադրեն... բացի գրանից, յեթե ցորենը գողանան՝ իրենց ել ցորեն չեն տա: Վոչ միայն իրենց, ուրիշների համար ել ցորեն չի մնա: Մուրիկներ, Ռուբի-



ՄԱՐԴԱՍ. 37

կենք, իր բոլոր ընկերներն ու հարեւաններն էլ ցորեն չեն ստանա, յեթե պահեստը թալանեն...

Յե՛վ Վանուշին պատկերացավ, թե ինչպես դուրսը մտնում են պահեստը ու ցորենը պարկերով շալակում տանում: Յորենի հետ տանում են և պահեստում յեղած գետնախնձորը, ճակնդեղը և ուրիշ բաներ... Տանում են այնպես, վոր պահեստում էլ բան չի մնում... ու առավոտը մարդիկ տեսնում են պահեստը դատարկ, իսկ նախագահը գալիս հանդիմանում է հայրիկին, վոր լավ պահակություն չի արել: Նույն բանը կասեն հետո և ժողովում...


Վանուշը մտածում ու հեսն էլ տկանջ եր դրնում հոր ու մոր շնչառությանը: Հայրիկն, առաջվա պես, շնչում եր խորն ու ծանր, իսկ մոր քնածայր, դեռ չեր լսվում: Յերբ, վերջապես, լսվեց և մոր քնածայր, Վանուշը մի փոքր էլ սպասեց, տկանջ դրեց անձրեւին: Անձրեւի ձայնն էլ չեր լսվում. յերեվի, կարվել եր:

Այդ բանն ուրախացրեց Վանուշին. նա զգուշությամբ վեր կացավ տեղից, կամացուկ հաճովեց մթան մեջ. ցորենի տուրակն իր «պոպոպով» նորից գլուխն անցրեց, հոր հրացանը վերցրեց անկյունից և, գուռն զգուշությամբ բանալով, գուրս յեկավ:

Անձրեւն, իսկապես, դադարել եր. յերկնքում տեղ-տեղ աստղերն աչքով եյին անում իրար, բայց մութն եր առաջվա պես և խաղաղ: Վո՛չ մարդ եր անցնում, վո՛չ շուն եր հաջում:

Վանուշը նայեց յերկնքին, ապա սկսեց արագ-արագ քայլել փողոցով դեպի վեր:

Նա գնում եր պահեստը, վոր հեռու չեք իրենց տանից: Դա հին յեկեղեցին եր, վորի վրա գյուղացիները խաչի տեղ աստղ եյին դրել և դարձրել կոտորածության պահեստ:



Մխարամ 37

Հագիվ վանուշը մոտեցել եր պահեստին, մի հիսուն-վաթսուն քայլի վրա յերկու սովեր նկատեց նրա դռան մոտ, վոչ թե մեծ դռան, վոր նա յուժ է փողոցին, այլ կողքի փոքր դռան մոտ, ուր յերեխաները պահամտոցի յեն խաղում մարդաբոյ կանեփների մեջ:

Բայց դրանք մարդիկ էյին արդյոք, թե ուրիշ բան... Վանուշը կանգ առավ ավելի լավ տեսնելու:

Յե՛վ նրա սիրտը ծուլ յեղավ հանկարծ. յերևացող սովերները մարդիկ էյին, նրանք ինչ-վոր բան էյին անում այնտեղ. թե ի՞նչ՝ Վանուշը չեր կարող տեսնել... անպես մոլթն եր:

Նորից նա մի քանի զգուշ քայլ արավ, մոտեցավ անկյունին ու, պատի յետեւը թագնալած, նստեց:

Մարդիկ ինչ-վոր բան էյին անում տնքալով ու մեկ-մեկ յետ նայում:

— Շուտ, անձրևը կտրեց, հիմա կգա, — ասավ նրանցից մեկը:

Վանուշը գլխի ընկավ, թե ինչ էյին անում. նա զողաց ամբողջ մարմնով ու գոռաց մեծի հաստ ձայնով կրծքովը մեկ.

— Եղ ի՞նչ եք անում, էյ...

Մարդիկ այս-այն կողմ նայեցին ու փախան զեպի կանեփները, նախ կուզե-կուզ, հետո արագ քայլերով:

— Գողեր, գողեր, — կանչեց Վանուշը, փորքան ուժ ունեք: — Բռնեցեք, բռնեցեք...

Ու այդ խոսքերը կրկնում եր շարունակ, հավատացած, վոր հիմա իր ձայնի վրա աներից մարդիկ դուրս կգան՝ նրանց բռնելու:

Յե՛վ, հիշտ վոր, շատ Հանցած մի մարդ դուրս յեկավ հարեփան տնից՝ շապիկի վրա ինչ-վոր բան

հագած, հետո մյուսը, յերրորդը, չորրորդը...

— Ի՞նչ գողեր, ուր են գողերը...

— Այ, քեռի, ա՛յ, ես կողմը գնացին, — ասաց Վանուշը շնչակտուր: — Գոռացի՛ փախան...

Մարդիկ մոտեցան պահեստի փոքրիկ դռանը, լուցկի վառեցին և այնտեղ գտան մի ունելի. հետո տեսան կողպեքը կիսով չափ ջարդած:

— Բա ես պահակն ուր ա, — ասավ մեկը:

— Պահակը յես եմ, — առաջ յեկավ Վանուշը, հրացանը ձեռին:

— Դու... դու ո՞վ ես...

Յես Ոհանեսի տղեն եմ: Հայրս գողացրեց, տուն յեկավ, յես յեկա նրա տեղը...

Մարդիկ ծիծաղեցին.

— Այ քեզ պահակ...

— Անունդ ի՞նչ է:

— Վանուշ...

— Հա, դու Վանուշն ես... Այ քեզ Վանուշ...

Կոլանտեսականներից մի յերկուսը մնացին պահակ, իսկ մեկը Վանուշին տարավ իրենց տուն:

Ու մի քանի որ գլուղում բոլորը խոսում էյին այն մասին, թե ինչպես Վանուշը հոր տեղը պահակ եր կանգնել ու գողերին փախցրել...

Այ ինչ աղա յեր Վանուշը:



305


024

Տէր. խմբագիր՝ Ան. Գառնարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Շապիկը և նկարները
Ս. ԲԱԳԴՍԱՆՔՅԱՆԻ

Գլավիտի լիադր՝ Կ—4656. Հրատ. 4265.
Գաղեր 1118. Տիրած 6000.
Թուղթ 62X91. Տպագրական 1 մամ.
Մեկ մամ. 30720 նիշ. Հեղինակային $\frac{3}{4}$ մամ.
Հանձնված է տրտագրության 9|IX-37թ.
Ստորագրված է տպագրության 11 դեկտեմբերի 1938 թ.
Գինը 60 կ.

Գեորգիաի տպարան, Յերեվան, Լենինի փող. 65.



✓
107

ԳԻՆԸ 60 Կ.

СТ. ЗОРЯН
ВАНУШ
ГНЗ ССР. АРМ. ЕРЕВАН

107

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան

NL0399375

8583